

Ամօրիի : Ասոր յաջորդեց իր որդին 5) Լեւոն (Գ) , որ Հայոց վերջին թագաւորն եղաւ : Ուրեմն՝ ըստ հ. Ստեփաննոս Լուսինեանի՝ լատին ցեղէ երեք Լեւոններ բարձրացած են հայկական գահին վրայ , եւ երրորդ կամ վերջին Լեւոնն է Հայաստանի « հինգերորդ լատին թագաւոր »ը :

Այս կարծիքէն է նաեւ ֆրանսացի նշանաւոր պատմաբանը Դիւ Կանտ (1610—1688) , որ սակայն հ. Ստեփաննոսէ բոլորովին տարբեր ճիշդագրութիւն մը կուտայ , աւելի մօտենալով ճշմարտութեան (1) : Դիւ Կանտ կրնաւ դունի , թէ Հայոց լատինացեղ թագաւորներէն առաջինն եղած է Գուխտոն , Ամօրի Լուսինեանի որդին , երկրորդը՝ Կոստանդ , երրորդը՝ Կոստանդին , չորրորդը՝ Ա. Ա. , իսկ հինգերորդը՝ Լեւոն վերջին : Այս պատմաբանը նկատելով որ Լեւոն Ե-ի տապանաքարին վրայ գրուած է՝ « quint roy latin » , այսինքն՝ « հինգերորդ լատին թագաւոր » , կը հետեւցնէ , թէ վերջին Լեւոնէն առաջ Հայաստանի մէջ գահակալող չորս ուրիշ ոչ բնիկ , լատինացեղ , թագաւորներ պէտք են ըլլալ , որոնց չորրորդին , այն է Լեւոն Ե-ի եւ Կոստանդինի միջեւ թագաւորողին անունը չեն յիշեր հեղինակները (2) :

Ո՞վ կրնայ ըլլալ այս անանուն անձնաւորութիւնը :

Պատասխանը կուտայ ինքը Դիւ Կանտ . — Drago ! Այո՛ , « Դրագո » է , կրնէ Դիւ Կանտ , Լեւոնի նախորդին անունը . վասն զի նոյն անունը կրող « հայ » թագաւորի մը արձաթէ մի քանի դրամը տեսեր է եղեր Պաւլիս Արքունի Մատենադարանին մէջ : Բայց այս կարծեցեալ հայ դրամը « բացարձակապէս ոչ մի կապ չունի հայկական դրամներու հետ » , ինչպէս կը պնդէ հրատարակիչը Բէ (3) , եւ կրսէ , թէ պէտք է Դրագո-ի տեղ ընդունիլ Կիպրոսի թագաւոր Պետրոս Ա-ը , որ 1368ի սեպտեմբերին՝ « Հայոց թագաւոր » տիտղոսն առաւ գոնէ (4) :

Նոր հեղինակներէ քաջ հայերէնագէտն Եգ. Դիւլորիէ եւս հիներու հետ կը պնդէ , թէ « հինգ » լատին թագաւոր նստած է ի Սիս , այս կարգով . 1) Ճիւան-Կոստանդին , 2) եղբայրը Գուխտոն , 3) Կոստանդին , որդի Պաղաթինի , 4) Կիպրոսի թագաւորը Պետրոս Ա. եւ 5) Լեւոն վերջին (5) :

(1) Du Cange, *Les Familles d'Outre-mer*. Publiées par M. E.-G. Ray. Paris, 1869, եր. 146—154 :

(2) Անդ , եր. 149 :

(3) Անդ , եր. 150 :

(4) Անդ , եր. 151 :

(5) *Rec. Cr.* եր. 703—714, եւ եր. 135, ծան. 3 :